

եւ ամենի. մանկական միանգամայն հսկայական: Երբ կը յիշէ անցեալը, սիրելի՛ անյագենալի անցեալը, իր երեւակայութիւնը կարող է վերկենդանացնել իրերն անոնց զգայաբանական բոլոր յատկութիւններով: Բայց նաեւ այդ պատկերացուցիչ կարողութիւնն ունի մերթ այն զարմանալի զօրութիւնն որ իրերը կը վերաստեղծէ, զանոնք կարծես զտելով: Երբ իր խորունկ աչքերը բանի մը կը նայէին, կարծես այդ բանն ահա կ'առնու նոր էութիւն, նոր արժէք. բարձր հրապոյր մը կը զեղու. Սեթեանի նայուածքին տակ այդ բանը կը զգենու վեհութիւն: Չեմ գիտեր, նախապաշարո՞ւմ պիտի համարէք արդեօք, երբ ես սքանչացմամբ տեսնեմ սա տողերուն մէջ իւրաքանչիւր իր վրայ տեղի ունեցած այլակերպութիւն մը.– անցեալի վերյուշումներ կ'ընէ. սիրագեղ կը յիշատակէ հին ընտանի բաները.

*Եւ բլուրներ եւ հեռաւոր գիւղօրէք
Եւ անտառակն այն, ի գագաթ բլրակին,
Ուր հինաւորց մի ծերունի գուարթագին
Ձուր անցորդին տար ի սափոր պաղպաջուն:*

Իր գեղեցկագոյն քերթուածներէն միոյն՝ *Երկու տունե-
րուն մէջ տեսէք ի՛նչ կ'ընէ մանկութեանը սիրելի իրերն ու
էակաները.*

*Ճրագունք որ գնան մէկ սենեակէն միւս սենեակ,
Բոց նոնենին, որպէս խոնարհ տանձնեակ...*

Եւ դարձեալ, յաճախ, ստեղծող է իր երեւակայութիւնն, որքան անհրաժեշտ է սակայն քնարերգակի մը, արձակագրի մը, նորավիպագրի մը: Տեսէ՛ք ինչ կը պատմէ փոթորկի մը նկարագրութեան մէջ.

*Եւ հեղեղներն սկսան խաղալ յաղթաջուր,
Եւ փապարներ, խորափիտներ թաքթաքոր
Խոխոջէին մեծագոռ.*